ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵ

ԼՅՈՒՍԻՆ

Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Նըրա դալուկն ես կըսիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի։
Նրա շուքը թեթև կըգա
Իմ հանգստյան հողի վըրա։
Մի երեկո մենակ էինք։ Նստած էի իր կողքին։
Նա, գլուխը թեքած դեպ ինձ ու անձնատուր ցընորքին,
Սահեցնում էր դաշնամուրին թաթը ճերմակ, ձյունի պես.
Թևի փափուկ հարված էր էն, հովի շըշուկ էր, ասես,
Որ վախում է՝ չըզարթեցնի անուշ քընած հավքերին,
Ու անցնում է եղեգնուտով թեթևասահ ու լըռին։
Մելամաղձոտ գիշերների տաք հեշտանքներ ու տենչեր
Ելնում էին ծաղիկների բաժակներից դեպի վեր.
Շագանակի պուրակները ու կաղնիներն ալևոր

Թախծում էին գլուխները տատանելով մեղմօրոր։
Լրսում էինք մենք գիշերին։ Պատուհանը կիսաբաց.
Ներս էր հոսում զով գիշերը գարնան բույրով
արբեցած։
Դաշտն ամայի, դուրսը հանդարտ, հանդարտ էնքա՜ն
ու էնքա՜ն։
Ու մենք մենակ, մենք մտածկոտ, մենք տասնուհինգ
տարեկան...
Նայում էի ես Լյուսիին։ Նա գունատ էր ու դալուկ։
Աչքերն երբեք ոչ մի անգամ էնքան անուշ, գեղաշուք
Չեն ցոլացրած ջինջ երկընքի լազուրն իրենց
խորքերում։
Հարբած էի ես նըրանով, նըրան էի ես սիրում։
Եվ էնքա՜ն էր նա ամոթխած, էնքա՜ն մաքուր, էնքա՜ն
հեզ
Որ թըվում էր՝ եղբոր նըման էի սիրում նըրան ես։
Մենք լուռ էինք։ Իմ ձեռքը նա պահած իրեն
ձեռքերում.
Ու գեղանի իր ճակատը մըռայլում էր, ցընորում։
Ու ես էն ժամ զգում էի — ի՜նչ թովիչ է ու կարող
Թարմ ու չքնաղ ջահելության հրապույրը մեզ գերող։
Լուսինն ելավ ջինջ երկընքում. լուսնի դալուկ լուսի
տակ
Ժըպտաց նա ինձ, ապա երգեց, որպես տխուր մի
հրեշտակ։
Մենք մեն-մենա՜կ, մենք մտածկոտ, ես ակնապիշ
Լյուսիին...
Նա երգում էր դողդոջելով՝ տրտում հենված իմ ուսին։
Խե՜ղճ երեխա, լալիս էիր։ Քնքուշ, մատաղ քո հոգում

Գուցե անբախտ Դեզդեմոնի կըսկիծն էիր դու
զգում...
Համբուրեցի ես խոնարհած քո գլուխը հուսահատ...
Երբ մյուս անգամ համբուրեցի — դու սառն էիր ու
գունատ...
Սառն ու գունատ դրած էիր մահվան տխուր
դագաղում...
40 Էսպես անցա՛ր, քնքո՛ւշ ծաղիկ, անցա՛ր կորար սև
հողում։

Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Նըրա դալուկն ես կըսիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի.
45 Գերեզմանիս հողի վըրա
Թեթև կըգա շուքը նըրա։